

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

15.11.2021 18:02



ՀՀ փաստաբանների պալատը՝ մարզերում գործունեություն ծավալող փաստաբանների մասնագիտական կարողությունների և հմտությունների կատարելագործմանն աջակցելու և վերապատրաստման գործընթացն էլ ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, վերսկսել է մարզերում վերապատրաստման առկա դասընթացների կազմակերպումը:

13.11.2021թ. «Վերաքննիչ բողոք կազմելու հմտություններ» թեմայով վերապատրաստման դասընթաց է կազմակերպվել հանրային պաշտպանի Վանաձոր քաղաքի մարզային գրասենյակում:

Դասընթացը վարել է փաստաբան Ռոման Ահարոնյանը:

Քննարկվել են վերաքննիչ բողոք կազմելու ընթացքում հանդիպած գործնական խնդիրները, դատական սխալի հատկանիշները, դատական սխալ վեր հանելու առանձնահատկությունները և թեմային առնչվող մի շարք այլ հարցեր:



```
BACK $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })
```